

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արդարադատության Նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման միջազգային պարտավորությունների ապահովման բաժնի փորձագետ Ռուզաննա Միսակի Գևորգյանից 2025թ հունվարի 7-ից մինչև 2025թ մայիսի 27-ը իրականացված աշխատանքների վերաբերյալ

Ես՝ Ռուզաննա Միսակի Գևորգյանս, 2025թ հունվարի 7-ից մինչև 2025թ մայիսի 27-ը ներառյալ, աշխատելով որպես ՀՀ Արդարադատության Նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման միջազգային պարտավորությունների ապահովման բաժնի փորձագետ, կատարել եմ հետևյալ աշխատանքները:

- Քաղաքացիների ընդունելություն, դիմումների ընդունում, դիմումների ուսումնասիրություն, պաշտոնական փաստաթղթերի արտացոլում, փաստաթղթերի տրամադրման գործընթացի կազմակերպում, մասնավորապես՝ քաղաքացիների փաստաթղթերի միջազգային վավերացման (Apostille) դիմումների ընդունման և դրանց պատասխանների տրամադրման, դիմումների կատարման համար համապատասխան ընթացքի ապահովում:
- Ըստ «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» 1961 թվականի հոկտեմբերի 5-ի Հաագայի կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված, որով հավաստվում է պաշտոնական փաստաթուղթն ստորագրող անձի պաշտոնական դիրքի, նրա ստորագրության, փաստաթղթի վրա դրված կնիքի կամ դրոշմակնիքի իսկությունը, քաղաքացիների կողմից ներկայացված պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրություն և համապատասխանելու դեպքում դիմումի կազմում:
- Քաղաքացիների պարզաբանման տրամադրում՝ սև կնիքի, էլեկտրոնային փաստաթղթերի և ապոստիլով վավերացվող պաշտոնական այն փաստաթղթերի վերաբերյալ, որոնք ուղարկվում են Կոնվենցիայի անդամ երկրներ:
- Քաղաքացիների հնչեցված հարցերի, նրանց իրավունքների և պարտականությունների, օրենքով սահմանված դրույթների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:
- Պետտուրքի վճարի մուտքագրում նախարարությունում գտնվող վճարման տերմինալների միջոցով:

- Քաղաքացիների կողմից հեռախոսազանգերի միջոցով հնչեցված հարցերի պատասխանների տրամադրում:

Հարգանքով՝



Ռուզաննա Գևորգյան

27.05.2025թ.